ցեն զնա ուժգին, և ահա անդէն յե-
տոյ ընդդէմ դարձցին մեռանելով
ժայթքեալ փրփուրս սպիտակափայլս,
և ոչ մի ինչ կարասցեն առնել նմա, և
նա կացցէ հաստատուն և անսասան։

Ի վերայ այսր ամենայնի մեք եւս
սիրելի ազգայինք իմ, մեք եւս պարտ-
ութեամբ հանապազ արթուն և զգոյշ կալ
զի մի անկանիցիմք յորոգայթս թշնամ-
ւոյն. քանզի ասեմք մեր իբրեւ զա-
ռիւծս մռնչեալ գոչէն թէ երբ կլա-
նիցեն զմեզ։ Մեք պարտիմք իբրեւ
հարազատ որդիք Հայաստանեայց Ե-
կեղեցւոյ իբրեւ առաջին և նուիրա-
կան պարտք քաջ իմանալ զվարդապե-
տութիւն նորա, և յամենայն ժամա-
նակի, յամենայն իսկ պատահմունս
պատրաստ գտանել ի պաշտպանու-
թիւն նորին։ Պարտ ի վերայ ձեր կայ,
սիրելի արենակիցք իմ, հանապազ
զարդիս ձեր առաքել ի հայկական վար-
ժարանս, զի ուսցին նոքա անդ զճշ-
մարիտ ուսումն քրիստոնէական, եւ
յետագայ ժամանակս ախոյեանք հան-
դիսացին պաշտպանողք Ազգութեան
ընդդէմ բազմախուռն յարձակմանց
մոլեռանդութեանց վարելոց ի փառա-
սիրութենէ, որով Ազգութիւնն կարէ
անսասան և հաստատուն կալ։ Պար-
տիք կարձել զարդիս ձեր յերթեւեկու-
թենէ ի վարժարանս օտարաց նախ-
քան զուսումն հայկականին, զի կո-
րուսանեն նոքա անդ զոգի և զարիւն
Ազգայնութեան. եւ միտք նոցա ա-
ռանց գիտութեան շաղեալ տոգորին
օտարին խմորք, և որք ի մէջ ազգին
գայթակղեցուցիչ անհատք լինին եւ
պատճառք խախտելոյ հիման Ազգայ-
ին շինուածոյն. քանզի և կաթուած
մի մեղմի ծորեալ ի գաւաթ մի կարէ
պղծորել զյատակութիւն ջրոյ նորա։
Վերջապէս օրինակ լեալ մեզ անհոգու-
թիւն շրջաբնակ ազգայն Հայաստանի,
որք չարաչար հարեալք ի թշնամւոյն
գահաւէժ տապալեցան յանդունդս
կործանման, ջան ի գործ արկեալ գուն
գործեցուք լուսաւորել զմիտս Հայ-
մանկունսն, նախանձախնդիր լինցուք
փառաց եւ պայծառութեան Եկեղե-
ցւոյ, եւ քաջ ի միտ առցուք, զի
յաղթանակ մեր ընդդէմ տիրապետու-
թեան և փառասիրութեան աշխարհս
մեծ և վսեմ եղիցի։

Ա-ե-ֆ. Կարապետեան
Պոլսեցի
Ազ. Ժա. Վարչ.

Ի. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տերոյենց պատուելին Հայրենիքի մէջ
հրատարակած Ս. Դատարանի պատ-
մութեան վերջին մասին մէջ է. Տիեզ-
երական ժողով մը կը յիշէ։ Զը հասկա-
ցանք թէ Պատուելին իբրեւ Հայ, թէ
իբրեւ օտար մը գրած է այն տողերը. վա-
սն զի չեմք կարծեր, որ իբրեւ Հայ այդ-
չափ տգէտ լինի մեր Հայաստանեայց Ա-
ռաքելական Եկեղեցւոյ պատմութիւն.
մեր Եկեղեցին բաց ի երեք տիեզերա-
կան ժողովներէ, այն է Նիկիոյ, Եփե-
սոսի և Կ. Պոլսոյ Ս. Ժողովներէն ու-
րիշ Տիեզերական ժողով մը չը ճանա-
չէր. և ոչ թէ ըստ պատուելոյն է. տի-
եզերական ժողով մը, այլ ԸՐԹՈՒԹ մը իսկ
չընդունելու համար այնչափ զսխեր
տուած է Ցունական եւ Լատինական
մոլեռանդն հետամտութեանց և մին-
չեւ ցարդ կը տայ։

Պատշաճ կը համարիմք այս մասին
Ներսէս շինողի օրով Ցունաց Կոստան-
դին կայսեր սպառնալից հրովարտա-
կին, որով Հայերն կըստիպէր Ցունա-
կան արարողութիւններն, ծեսերն եւ
մանաւանդ Քաղկեդոնի ժողովն ընդու-
նիլ. Դունոյ մէջ գումարուած ժողովին
տուած պատասխանը մէջ բերել։ Ե-
կեղեցական պատմութիւնը կ'ասէ՝ թէ

digitised by A.R.A.R.@

բոլոր ժողովրդական բազմութիւնը կ'աշխատակ միաբարբառ. « Մեք նոր ուսանողութիւն չ ընդունիմք, զոր մեզ ընկալեալ եմք վարդապետութիւն հաւատոց յԱւաքելոց մերոց՝ ի Թադէոսէ և ի Բարդողիմէոսէ եւ ի օրէնց Լուսաւորչէն և յերիցս Ժողովոց և ի Թարգմանչաց մերոց զայն միայն ունիմք հաստատուն, այլ մեզ ոչ կարեմք յանձն առնուլ »։

Պատուելին կամ գաղանի նպատակաւ մի օտար մասնաւոր աղգի մը Ժողովին Տ.Էդէրսկան անունը առած է, և կամ մեր Եկեղեցւոյ պատմութիւնը ուրիշ եկեղեցեաց պատմութեան հետ շփոթած. մեզ որ ալ լինի. այս միայն կ'ասենք, որ Պատուելին քաւ կ'ընէ, եթէ այլոց աչաց շիւղը գիտած ժամանակ իրեն աչքին գերանը տեսես չառնէ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Այս տարի ձմեռը միւս տարիներուն նկատմամբ բաւական սառակ է, բայց ոչ գաւառներու ձմեռան չափ։ Ցորդ անձրևներն եւ առատ ձիւնը, որոյ նմանը քաղաքիս մէջ շատ քիչ անգամ տեսնուած է, մեծ վնաս գործեցին. շատ շէնքեր և խանութներ վնասուեցան. ինչպէս նա և Սիոն լեռան վերայ քաղաքիս հարաւային կողմն մեր սեպհական Ս. Փրկչայ վանուց պարիսպապատը, որ վնասուած էր բաւական ժամանակէ ի վեր, այս տարի արևելեան կողմի պատը վերէն մինչեւ վար երկու ձեղքեցաւ և հիւսիսակողմեան պատը մէկ տաքէն աւելի թեքեցաւ։ Բայց այսու ամենայնիւ հակառակ եղած տարաձայնութեանց ուսուսի վերաբերեալ բաներն առատ են և ուժան. և յուսալի է, որ այս տարուան բերքը աւելի արդիւնաւոր կը լինի։

— Յաւաք սրսի ամսոյս 12ին հռոսպրիւ խմբայանք Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքութեան Տեղապահ Տ. Նիկողայոս Ս. Աբք Եպիսկոպոսի առ Աստուած փոխուիլը։

— 17ին բերկրութեամբ սրսի ընդունք Վարժապետեան Գեր. Ներսէս Ս. Աբք Եպիսկոպոսի Պատրիարքութեան Տեղապահ ընտրուիլը։

— Ինչպէս յայտնի է, տեղոյս Յոյն ժողովուրդը իրենց նախկին Պատրիարքի պաշտօնանկութեան համար խռոված է ցարդ Միաբանութեան հետ և ներկայ Պատրիարքը չէ ընդունած, ուստի մինչեւ հիմա առաջնոյն անունը կը մնայ. այս պատճառաւ ներկայ Պատրիարքը ժողովրդեան ձեռքը եղած եկեղեցիներն գրաւած է և միայն անոնք եկեղեցի կ'ընդունի, զոր զինքը ճանչած և ընդունած են. այս առթիւ ամսոյս 17ին Պէրճէ գիւղի ժողովուրդը իրենց քահանաներուն հետ մէկ տեղ եկեղեցւոյ դուռը կը խարտակեն և ներս մտնելով՝ ժամերգութիւն եւ պատարագ կ'ընեն, որով Պատրիարքի կուսակիցներուն և հակառակ եղողներուն մէջ մեծ կռիւ մը կը ծագի։ Կառավարութիւնը լսելով այս դէպքը՝ երկու կողմէն հինգական հոգի կը բանտարկէ, նոյնպէս պատարագող քահանայն։ Պատրիարքը իւր մարդիկը կ'ղրկէ բանտէն եւ քահանայն կարգընկէց կ'առնէ գլխարկը եւ վերարկուն առնելով։ Այս խնդրոյն դատը ցարդ կը շարունակուի Կառավարութեան դուռը։

— 19ին կէս գիշերուան միջոցին երկրաշարժ մի տեղի ունեցաւ, որ բաւական ուժգին կերպիւ ցնցեց. բայց բարեբաղդաբար շատ քիչ տեւելուն վնաս մը չը տուաւ։

— Տեղոյս Կառավարիչը, որ երկու շաբաթէ ի վեր այցելութեան եղած էր Յոպպէի և Գազայի, յետ իւր այցելութեան և Յոպպէի ճանապարհի վնասեալ մասերու նորոգութեան, ամսոյս 22ին քաղաքս վերադարձաւ։

digitised by A.R.A.R.@